8563

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«19» 05 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0089-21

Ձեռնարկողը՝ *«Պետական եկամուտների կոմիտե»*
Ք. Երևան, Մովսես Խորենացի 3/7

Գործունեությունը՝ *«Գյումրի» քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում հյուսիսային արտաքին տնտեսական գործունեության միասնական կենտրոնի կառուցման» շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ*
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0089-21

< 19 > 05 2021թ.

«Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում հյուսիսային արտաքին տնտեսական գործունեության միասնական կենտրոնի կառուցում» աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Պետական եկամուտների կոմիտե»
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ, ք. Գյումրի

Ներածական մաս. Իրականացվող գործունեության նպատակն է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում կառուցել արտաքին տնտեսական գործունեության (այսուհետ՝ ԱՏԳ) միասնական սպասարկման կենտրոն: ԱՏԳ կենտրոնը կառուցվելու է Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ ՊԵԿ), Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում գտնվող 21.57 հա մակերեսով հողատարածքի վրա: Կենտրոնի կառուցման առաջին փուլով նախատեսված էր կառուցապատել 5.8 հա տարածքը, որի վերաբերյալ 07.04.2020 թվականին տրվել է ԲՓ 000033 համարով դրական եզրակացությունը: Սույն՝ երկրորդ փուլով նախատեսվում է կառուցապատել մնացյալ՝ 15.77 հա հողատարածքը՝ վերջնական արդյունքում ձևավորելով ԱՏԳ-ի մեկ միասնական կենտրոն:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Գյումրու ԱՏԳ միասնական սպասարկման կենտրոնի կառուցման նախագիծն իրականացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված նախագծային առաջադրանքի և Գյումրու քաղաքապետարանի կողմից տրված 13.10.2020թ. թիվ 177 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Նախկինում 21.57 հա տարածքում տեղակայված է եղել տանկային գունդ, 1950-ական թվականներին կառուցված շենքերով և շինություններով: Նախատեսվող գործունեության

տարածքը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հանձնվել է ՀՀ կառավարության 01.08.2019թ.-ի թիվ 979-Ա որոշմամբ:

Գյումրու հյուսիսային արտաքին տնտեսական գործունեության սպասարկման կենտրոնի հիմնումը բխում է ՀՀ ՊԵԿ 2020-2024թթ. զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրից: Նպատակն է ստեղծել էլեկտրոնային կառավարման համակարգերի և թվային լուծումների վրա հիմնված, արտաքին տնտեսական գործունեության միասնական կենտրոն՝ մաքսային գործառնությունները դյուրացնելու և արդյունավետությունը բարձրացնելու, առավել որակյալ և ժամանակակից ծառայություններ մատուցելու համար: Կենտրոնը հագեցած կլինի գերժամանակակից տեխնիկայով և արդի լուծումներով, ինչը հնարավորություն կտա քաղաքացիներին և տնտեսվարողներին սպասարկել բարձր որակով:

Աշխատանքային նախագծով 15.77 հա տարածքում կառուցվելու և իրականացվելու են հետևյալ աշխատանքները՝

Կառուցապատման աշխատանքներ (0.726573 հա), որից՝

- պահեստային մասնաշենք (1 հատ) - 0.66912 հա,
- տնտեսական շենք՝ K-9 սենքով (1 հատ) - 0.028608 հա,
- սպասարկման սրահ (2 հատ) - 0.0072 x 2 = 0.0144 հա,
- հսկիչ կետեր (3 հատ) - 0.001815 x 3 = 0.005445 հա,
- սանհանգույցներ (4 հատ) - 0.00225 x 4 = 0.009 հա:

Կանաչապատման և ասֆալտապատման աշխատանքներ (11.297827 հա), որից՝

- կանաչապատման աշխատանքներ - 1.622 հա,
- ասֆալտապատման աշխատանքներ - 9.675827 հա:

Մնացյալ 3.7456հա տարածքը հարթեցվելու է և հետագայում՝ ԱՏԳ կենտրոնի շահագործման փուլում չի օգտագործվելու, օգտագործվելու է միայն շիրարարության փուլում՝ շինարարական տեխնիկայի կայանման և հողային զանգվածի ժամանակավոր պահման համար:

ԱՏԳ կենտրոնում նախատեսվում է կառուցել 400-450 հատ բեռնատար տրանսպորտային միջոցների համար կայանատեղեր՝ համապատասխան մուտքի և ելքի ճանապարհներով՝ ապահովելով տրանսպորտային միջոցների ազատ շրջադարձի հնարավորությունը:

Կայանատեղերը իրականացվելու են բեռնված բեռնատարների (առնվազն 60 տոննա բեռնատարողությամբ) տեղաշարժման համար բավարար հուսալիություն և կայունություն ունեցող երկաթբետոնե ծածկույթով: Կայանատեղիում նախատեսվում է արտաքին լուսավորության: Կայանատեղիում պատշաճ հսկողություն սահմանելու համար նախատեսվելու են հավասարաչափ տեղաբաշխված հսկիչ կետեր: Տեսահսկման համակարգը բավարարելու է հետևյալ տեխնիկական պայմաններին՝ այն համալրված է լինելու տեսագրելու և ձայնագրելու հնարավորությամբ, ընդ որում տեսագրված և ձայնագրված նյութերը պետք է պահպանվեն յուրաքանչյուր օրվա համար առանձին՝ համակարգչում կամ ցանկացած արտաքին կրիչի վրա: Տեսագրված և ձայնագրված նյութերը կպահպանվեն առնվազն 90 օր:

ԱՏԳ կենտրոնի մուտքի հատվածում նախատեսվելու է հսկիչ անցագրային կետ՝ 2 հատ 6 մետր երկարությամբ, հեռահար կառավարմամբ արգելափակոցներով:

Նախատեսվում է կառուցել 25 բեռնատար տրանսպորտային միջոցների համար միաժամանակյա բեռնաթափման, զննման հարթակ՝ ծածկարանով (100 մետր երկարությամբ, 12 մետր լայնությամբ, 5.5 մետր բարձրությամբ, մետաղական հիմնակմախքով, տանիքը՝ մետաղական թիթեղյա պրոֆիլով և տոպինգային հատակով): Հարթակի տանիքի ջրահեռացումը իրականացվելու է կազմակերպված ձևով: Հարթակում կլինեն տարբեր դպրոցներ կառուցելու

հնարավորություն ունեցող էլեկտրոնային տարբեր կշեռքներ՝ 100կգ-ից մինչև 1 տոննա կշռելու հնարավորությամբ (նախնական՝ յուրաքանչյուր 3 կամ 4 հարթակի համար մեկ կշեռք հաշվարկով):

ԱՏԳ կենտրոնում լինելու է բեռնաթափման, զննման մասնաշենքին կից պահեստային մասնաշենք (76 մետր երկարությամբ, 36 մետր լայնությամբ, 5.5 մետր բարձրությամբ, մետաղական հիմնակմախքով, պատերը և տանիքը՝ սենդվիչ պանելներով, տոպինգային հատակով): Պահեստային մասնաշենքում կլինի առնվազն 20 հաստիքի հաշվարկով բեռնաթափող աշխատակիցների համար նախատեսված հանգստի սենյակ, հանդերձարան, ցնցուղարան և սանհանգույց՝ գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան:

Բեռնաթափման զննման մասնաշենքից դեպի պահեստային մասնաշենք կլինի 5 մետաղական սեկցիոն, ավտոմատ կառավարման համակարգով մուտքի դարպասներ՝ հավասարաչափ բաշխված հեռավորությամբ:

Բեռնաթափման, զննման հարթակին և պահեստային մասնաշենքին կից տարածքներում նախատեսվում է սպասարկման սրահ՝ ապահովված հանգստի սենյակով, հանդերձարանով, սանհանգույցով:

Ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման միասնական կենտրոնի գոյություն ունեցող պահեստային մասնաշենքում գոյություն ունեցող պահեստների ծավալով նախատեսվելու են 2 ռեժիմ ունեցող սառնարաններ՝ բացասական (10.5մ*18մ չափերով և 5.15մ բարձրությամբ) և դրական (10.5մ*18մ չափերով և 5.15մ բարձրությամբ): ԱՏԳ կենտրոնում կլինի բեռնատար տրանսպորտային միջոցների համար նախատեսված շարժական ռենտգեն ճառագայթման զննման սարքավորում՝ (լրակազմ) առնվազն 6 MB(մեգա էլեկտրոն վոլտ) լարումով, որը կիրականացնի բարձր խտությամբ բեռների զննում ցանկացած վայրում և կունենա նյութերի (բարձր և ցածր խտության բեռների) տարբերակման ֆունկցիոնալ հնարավորություն:

ԱՏԳ կենտրոնում լինելու է 2 հատ ստատիկ 17մ երկարությամբ, 100 տոննա կշռողականությամբ բեռնատար տրանսպորտային միջոցների համար կշեռքներ ԱՏԳ կենտրոնի մուտքի հատվածում իրենց համապատասխան ծածկարաններով: Կլինի գրանցման և ձևակերպման համապատասխան տաղավար, սանհանգույց:

ԱՏԳ կենտրոնի տարածքում կտեղադրվեն համապատասխան ճանապարհային նշաններ, ցուցանակներ, կանգնակներ և գծանշումներ: ԱՏԳ կենտրոնը կհամալրվի ապրանքներ բեռնման բեռնաթափման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցներով և բեռների տեղափոխման կամ փոխադրման համար անհրաժեշտ այլ տեխնիկական միջոցներով: ԱՏԳ կենտրոնի տարածքում բեռնատարների ներքին շրջանառությունը կարգավորող էլեկտրոնային համակարգերով, ներառյալ լուսացույցներով, կայանատեղիների համարակալմամբ, բեռնատար տրանսպորտային միջոցները ըստ կոնկրետ կայանատեղի ուղղորդելու, ազատ կայանատեղիների հաշվառման, ելքի ուղեփակոցին մաքսային հսկողությունն ավարտված բեռնատարի տվյալների իրազեկման հնարավորությամբ: ԱՏԳ կենտրոնի տարածքում կգործի օնլայն հերթագրման համակարգ:

Բոլոր մասնաշենքերում նախատեսվում է էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, օդափոխության, օդորակման, ինտերնետ կապի, հեռահաղորդակցման, հակահրդեհային անվտանգության և հրդեհաշիջման, լուսավորության, ներքին տեսահսկման համակարգեր:

Գյումրու ԱՏԳ կենտրոնի տարածքում նախատեսվում է կառուցել թվով չորս սանհանգույց:

ՇՐՋԱԿԱՅԱՆ ՄՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ Ք. ԿՈՄԿԱՎԱՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ
РА ЕРЕВАН Г. ЦЕНТР ОКРУГА
RA YEREVAN C. CENTRE DISTRICT
77 ԲՐՈՒՍՈՎԻ ՓՈՂՈՑ

ԱՏԳ կենտրոնի ամբողջական տարածքը պարսպապատվելու է մետաղական ցանցով, բարեկարգվելու և կանաչապատվելու է: Ընդհանուր առմամբ կանաչապատվելու է 1.622 հա տարածք, որի ոռոգման համակարգը միացված է լինելու արդեն իսկ շահագործման մեջ գտնվող ԱՏԳ միասնական կենտրոնի հարավային մասի ոռոգման ցանցին: Ոռոգումը իրականացվելու է ըստ սեզոնի և ըստ պահանջի: Կանաչապատման աշխատանքների համար բերվելու է 6391.9 մ³ սևահող, որը տարածվելու է կանաչապատման աշխատանքների տեղամասերում, որից հետո այդ տարածքներում իրականացվելու է սիզախոտի սերմի ցանք:

ԱՏԳ կենտրոնն ունի առանձին տրանսֆորմատորային ենթակայան՝ երկու սնուցման ուղղությամբ, դիզելային գեներատոր 400 ԿՎԱ հզորությամբ, հակահրդեհային և խմելու ջրի պոմպակայան, երկու հակահրդեհային և մեկ խմելու ջրի ջրավազաններ:

Նախատեսվող գործունեության տարածքի գազամատակարարումը, ջրամատակարարումը և էլեկտրամատակարարումը իրականացվելու է արդեն իսկ շահագործման մեջ գտնվող ԱՏԳ միասնական կենտրոնի հարավային մասից:

Ավտոկայանատեղու պատվածքի հաշվարկի համար ամբողջ տարածքը բաժանվել է երկու տեղամասի, որոնցից մեկը մոտեցման ուղիներն են, իսկ մյուսը՝ կանգառի կետերը: Տեղամասերից յուրաքանչյուրի համար ընդունվել է ճանապարհային պատվածքի առանձին կոնստրուկցիա:

Նախատեսվող գործունեության տարածքում տեղադրվելու են ժամանակավոր շարժական տնակներ օգտագործվող շինարարական նյութերի պահեստավորման համար:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են բեռնատար ինքնաթափեր, էքսկավատորներ, ավտոկռունկներ, տոփանող, ասֆալտ տեղադրող և ջրցան մեքենաներ:

ԱՏԳ կենտրոնի շինարարության ժամանակ առաջացած շինարարական և կենցաղային աղբը, ինչպես նաև շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը բեռնատար մեքենաներով տեղափոխվելու են Գյումրու քաղաքային աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

ԱՏԳ կենտրոնի շինարարության նախապատրաստական աշխատանքների ժամանակ իրականացվելու են հողային/փորման, ինչպես նաև տարածքի հարթեցման աշխատանքներ:

Հողային աշխատանքների արդյունքում փորվելու է մոտ 146963.3մ³ հող, որից՝

-հետլցման ենթակա հող - 26738.2մ³,

-հետլցման ենթակա բուսահող - 10893մ³,

- Գյումրու աղբավայր տեղափոխման ենթակա հող - 81335մ³

- շինարարական աշխատանքների ժամանակ հանված 27997.5մ³ ծավալի բուսահողը պայմանագրային հիմունքներով հանձնվելու է Գյումրի համայնքի տնօրինությանը:

Նախատեսվող գործունեության վայրը գտնվել և շարունակվում է գտնվել բազմամյա մարդածին ազդեցության ներքո, ուստի կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանիներ և բուսատեսակներ չկան, բնության հուշարձաններ հաշվառված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

-օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,

- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,

- օրվա ընթացքում շին.հրապարակի պարբերաբար ջրում,

- շինանյութերի ծածկում անջրաթափանց թաղանթով,
-կենցաղային և շինարարական աղբի տեղափոխում Գյումրու քաղաքի աղբավայր պայմանագրային հիմունքներով,
- աշխատանքների ավարտից հետո տարածքի հարթեցում և բարեկարգում,
- շինարարական աշխատանքները իրականացնել ցերեկային ժամերին,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում:

Պատճառաբանական մաս. Գյումրի քաղաքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները ինչպես նաև և Շիրակի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Գյումրու քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
-Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Պետական եկամուտների կոմիտեի» կողմից ներկայացված «Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում հյուսիսային արտաքին տնտեսական գործունեության միասնական

կենտրոնի կառուցման» շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան

Ընդամենը՝ 6 էջ